

կանց: Նրանց այս ամսին շարունակ դուրս ու ներս անելը ստիպում է կատուններին մլաւել, որովհետեւ տեսնում են սրանց:

Փետրուարի վերջին մարդիկ աշխատում են նրանց տանից դուրս անել, այս պատճառով էլ հորթի գեղմով (փոստ) խփում են պատերին և ասում.

Շւտը դուս.

Մարդը ներս:

Եւ որովհետեւ գոմերի շուտներն աւելի աներես են, տկճորի մէջ մանր քարեր են լցնում, և նրանով խփում տաւարին ու գոմի պատերին՝ վերոյիշեալ դարձուածքը կրկնելով:

Գրողի զգիր.—Մաստիկ պառաւած կանանցից ոմանք դառնում են «գրողի զգիր» ման են գալիս գրողի, հոգեառ հրեշտակի, հետ ցոյց տալիս մեռնելու դատապարտուածների տները և օգնում հոգի առնելիս: Գիշերները Գրողը գալիս վեր է կացնում այսպիսի կանանց և հետը տանում և թէպէտ այս նկատում են անեցիք, սակայն զգուշանում են յայտնելու:

Գօննադայ.—Առանց եկեղեցական ծիսակատարութեան թաղուած հայ մեռելը մասնաւորապէս և անհաւատ, թուրքերի մեռելներն ընդհանրապէս՝ նոր թաղուած միջոցին գիշերները շան կամ այլ կերպարանքով յարութիւն են առնում և շրջում գերեզմանատանը, լուսաղէմին կրկին մտնում գերեզման և անշնչանում: Մի անգամ մինն անցնելով թուրքի գոններով (գերեզմանատան մօտով), տեսնում է երկու շուն, և հետը տանում տուն: Առաւօտեան այդ շների փոխարէն տեսնում է երկու մեռել յատակի վրայ պռկած: Իմանալով, որ «գօննադայ» է՝ տանում են կրկին թաղում և կրծքին մի մեծ մեխ խփում, որ այլ ևս չվերկենայ:

Ղոււի-Պարարի մօտ էլ մի վարդապետ է «գօննադայ» լինում և այդ կերպարանքով երևում մարդկանց: Մի անգամ Մաթոսի Գևոն էր տեսել նրան աւերակ եկեղեցու մօտ, խեղճը այնպէս էր վախեցել, որ բերանը ծռուել էր: Գիւղացիները շատ որոնել էին, որ գերեզմանը գտնեն, բանան և մի մեխ խփեն կրծքին, որ էլ «գօննադայ» չլինի, բայց չէին գտել:

#### Կ Ա Ք Ա Ր Դ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա. Հաւանմայութիւն.—Այս գաւառում ևս ծիծեռնակը, աղաւնին և կաշաղակն ընդհանրապէս համարում են բարեգուշակ, խել բուն և ազաւաւը՝ չարագուշակ: Բացի սրանից՝ գուշակութիւններ են անում նայելով թռչունների ա) գտնուած տեղին, բ) հանած ձայնին և գ) կատարած գործողութեան:

Տերը.—Երբ արագազը հերթիկի վրայ կանգնի՝ հիւր է գալու։  
Երբ հաւը թառի վրայից է կանչոււմ, գուշակոււմ են, որ մի  
արտասովոր բան է պատահելու։

Երբ արագիւր մինի կարան բուն է շինոււմ, գուշակոււմ են,  
որ այդ տանը բախտաւորութիւն է սպասոււմ։

Չայնը.—Երբ բուն բուայ՝ մի գծրազգութիւն, մահ է պա-  
տահելու։

Գործողութիւն.—Արագիւր մարտի 9-ին առաջին անգամ երե-  
ւալիս՝ եթէ կացոււմ հացի կտոր բերէ՝ առատութիւն է լինելու,  
եթէ չոփ՝ (ծղոս) անբերութիւն և եթէ կտաւ՝ մահ։

Բ. Կենդանիների միջոցով գուշակութիւն.—Երբ կատուն երեսը  
լուսնոււմ է՝ գուշակոււմ են, որ հիւր է գալու։

Երբ շունը սոնոււմ է՝ գուշակոււմ են, որ հիւանդը մեռնելու է։

Երբ կատուն հերթիկից նայոււմ է՝ հարցնոււմ են, կատու,  
խուրը (հիւրը) մը եանից (կողմից) է գալոււմ, և որ կողմը որ  
նայեց՝ գուշակոււմ են, այն կողմից հիւր է գալու։

Գ. Մարդկանց միջոցով գուշակութիւն.—Որոշեալ անձնաւորու-  
թիւններ շնաւազ կամ թխէր» (չար կամ բարի) են համարոււմ և  
մարդիկ մի գործ սկսելիս երբ առաջին անգամ սրանց են հան-  
դիպոււմ, սրանց համեմատ գուշակոււմ են գործի յաջողութեան  
մասին։ Այս պաւառոււմ ևս ընդհանրապէս քահանային պատահելը  
չարագուշակ են համարոււմ և, կամ հրաժարոււմ են մտադրուած  
գործից, կամ ձեռքը ամորձիքին քսոււմ, որ սչարը խափանի։

Դ. Մարդու քննողական շարժումների միջոցով գուշակութիւն.—Երբ  
աջ աչքը խաղոււմ է՝ գուշակոււմ են, որ ուրախալի բան է պատա-  
հելու, իսկ եթէ ձախը՝ տխրելի։ Երբ աչքերը պաղոււմ են (սա-  
ռոււմ են) հիւր է գալու, իսկ երբ բեռ է վերցնոււմ, կողին չոփ է  
նստոււմ, ասոււմ են։ Եով ա գալոււմ բեռ ու բարձով՝ և գուշակոււմ  
են, որ մի բան են ստանալու։

Երբ ալիանջը կանչոււմ է՝ սկսոււմ են տալ իրենց ծանօթների  
անունները և որի անուան վրայ որ դադարեց ձայնը՝ գուշակոււմ  
են, որ նա էր իրենց մասին բամբասողը։

Երբ երեսը այրոււմ է՝ ասել է իրեն բամբասոււմ են։

Երբ քիթը քոր է գալիս՝ հիւր է գալու։

Երբ փռչոււմ են կէնտ թուով, ասոււմ են «Սարը արա»  
(սպասիր) և չարագուշակ համարելով՝ գործը յետաձգոււմ են, իսկ  
երբ զոյգ թուով են փռչոււմ, ուրախանոււմ են, և ասոււմ. «Խէր  
ա»։ Ըրագի դէմ կէնտ թուով փռչնալն էլ խէր է համարոււմ։

Երբ բուռը քոր է գալիս՝ փող պէտք է ստանան կամ տան։

առանձնապէս փորձում են, թէ աջ ու ձախ բռից սրբ ստանալ և սրբ տալ է նշանակում:

Երբ երեխան անընդհատ լաց է լինում, գուշակում են, որ մի գժբաղղութիւն է պատահելու, ուստի մայրը խփում է նրա գլխին ասելով. «Ուտա քո գլուխ»:

Ե. Անշունչ առարկաների միջոցով գուշակութիւն.—Իմանալու համար, թէ գերդաստանին գժբաղղութիւն է գալու թէ ոչ՝ խմորից մարդ են շինում և ձգում թոնիրը, եթէ հփուելիս ձեռքը կամ ոտը ուռեց՝ ասել է գալու է, իսկ եթէ չուռեց՝ ոչինչ չի գալու:

Ուխտատեղիներում մեխ են խփում քարերի մէջ, եթէ մեխը քարը ծակում, ներս է մտնում, ասել է ուխտը կատարուելու է:

Նոյն նպատակով փոքրիկ քարեր են քսում ուխտատեղու պատերին, մանաւանդ խաչքարերին, եթէ կպչում է և մտնում՝ ասել է ուխտը կատարուելու է:

Երբ մի գործի են գնում, եթէ դատարկ կժի կամ դատարկ ամանի են պատահում, գուշակում են, որ անյաջող է լինելու, իսկ եթէ լիքը կժի, լիքը ամանի, բեռի, հացի են պատահում՝ յաջողակ է լինելու:

Զ. Կախարդութիւն.—Գորտի ուստկըը (թիակը) պահում են իրենց մօտ և աննկատելի կերպով քսում այն կանանց, որոնց սէրը կամենում են զրաւել:

Էգ գայլի սեռական անդամը կտրում են և իրենց մօտ պահում, որ յաջողակ լինեն:

Հաւատում են, որ եթէ մեռելի ուղեղը սև կատուի ականջով շագախեն և ուտեն՝ աներևոյթ կը դառնան, միայն ջրի մօտ տեսանելի կը լինեն:

Համբարձման չորեքշաբթի օրը շէմբին խփում են քոս մեխ (պայտի մեխ), որպէսզի չարը խափանի: Նոյն նպատակով համբարձման գիշերը գութանի խոփը զցում են շէմբի առաջ:

Գարնանամտին հերթիկի շուրջը շոով գծում են, որպէսզի չարը չկարողանայ այդ գծից անցնել և ներս մտնել:

Ը. Կովի կամը աւելացնելու յուսով դիմում են հեռեկալ կախարդական միջոցներին.

1. Տանտիկիւնները իրենց զրպաններում պահում են օձի գլուխ կամ գայլի վէպ:

2. Մեծ պասին թխում են 7 փթիւր (գաթի ձևով քակոր) և պահում, որ համբարձման օրը վառեն կաթի կաթսայի տակ:

3. Գարնանը՝ երբ առաջին անգամ արեգակի շողը հերթիկից ներս է մտնում, նրա ընկած տեղը իւղ և ալիւր են քսում, որպէսզի վերջիններս առատ լինեն:

4. Աշխատում են մինչև համարձուց հարեանից մէջքան կամ կաթ ստանալ, որպէսզի նրա կաթի «բարարեաթն» էլ մէջքանի կամ կաթի հետ գայ իրենց:

5. Համարձուց օրը աշխատում են սիրի-սիրի ըոյսից երկու տերեւ ունեցողը դանել և ձգել խնոցու մէջ:

6. Նոյն օրը եօթը բակից լսելեան և ծածկարար շոփ են հաւաքում և վառում կաթի կաթնայի տակ:

7. Համարձուց գիշերը տանտիկիճնները ձնուծից կապում են մեխ կամ փուշ, յետոյ փոխանները հանում, կապում ձնուծի բերնին և հեծնում:

8. Նոյն գիշերը ծածկարար տանտիկիճնները հեծնում են հարեանի կովը կամ մատակը և ասում.

Եղգ ընծի,

Քանդ քեզի,

որպէսզի հարեանի իւզն էլ իրենց գայ:

9. Նոյն նպատակով և նոյն գիշերը գնում հարեանի հերթիկի շուրջը շշով դիծ են քաշում:

10. Նաև նոյն գիշերը երկու եփած ձուի միջից անց են կացնում կապոյտ թել և հարեանի բակում թաղում:

11. Եւ կամ հարեանից երկու կտոր ցան (աթար) են գողանում և իրենց կաթի կաթնայի տակ վառում:

Վերոյիշել կախարդութեան պատճառով երբ հարեանի կաթի իւզային մասը պահասում է, լաւ չի հարւում, մի ձու են տալիս ազօթելու, և տան առաստաղում պահում: Ազօթելիս՝ ազօթող կինը «չար աչքի» ազօթք է ասում ձուի վրայ:

Երբ չար աչքից կաթը կարմրագոյն է դառնում, առանց խօսելու կթում են և կաթը թոնրի կամ աղբրի ակը, կամ փշի վրայ են ածում, որ շուտով այդ չար աչքի ազդեցութիւնն անցնի, և կամ մի կտոր հացի վրայ աղ են ածում, «չար աչքի» դէմ ազօթող կնոջ տալիս ազօթելու և կէսը շան, կէսն էլ կովին են տալիս ուտելու:

Ը. Փուշակողներ.—Սրանք լինում են թէ կանանցից և թէ տղամարդկանցից. գուշակում են մարդկանց ապազան, պատմում են նրանց անցեալը. իմանում են թէ կորած իրը որտեղ է գարնւում, պանդուխտը երբ կը վերադառնայ, կը կատարուի արդեօք մարդկանց մտազրութիւնները, հիւանդութիւնները օր սրբիբի տուածն են, կամ ի՞նչ է հիւանդութեան պատճառը:

Փուշակողների այս շնորհքը «առւածուրիկ» է,—աստուածային մի պարզեւ, ուստի և սրանք մեծ յարգանք են վայելում ժողովրդից: Այս շնորհքը նրանք ստացել են կամ ծննդեամբ, կամ

երազով: Ծննդեամբ ստացողները ծնունել են Քրիստոսի ծննդեան կամ Զատիկի հրաշագործ գիշերը, այսպիսով և՛ արժանացել են աստուածային այդ շնորհին: Ոմանք էլ իրենց ծնողների տուածուրիկ շնորհը ժառանգել են, և շարունակում են գործադրել:

Երազով շնորհք ստացողներն առաքինի գործով հաճելի են լինում մի որևէ սրբի, և սա երևում է սրանց երազում՝ և յայտնում, որ պարգևում է այս կամ այն կերպ գուշակութիւններ անելու շնորհք:

Ծննդեամբ գուշակողները եղնգի են նայում և մոմ թափում: Երազով շնորհք ստացողները զարի են քցում, թիզ չափում, մաղ պատեցնում, մոմ թափում, լայլուղ յիշկում:

Եղունգ յիշկել. — Միանգամայն այն է, ինչ որ տեղի է ունենում Զաւախքում, որ արդէն մանրամասն նկարագրել եմ <sup>1)</sup>:

Մոմ թափել. — Այս տարածուած է նաև Վարանդայում, և արդէն նկարագրել ենք <sup>2)</sup>: Այստեղ կարևոր ենք համարում աւելացնել՝ որ Նոր-Բայազէտում իբր մոմ թափող յայտնի է եղել Մոմ-ճոնց Սուլիկ պառաւը, որ ստացել էր այդ շնորհը Սուրբ Կարապետից և մոմ թափելիս այսպէս էր աղօթում <sup>3)</sup>. «Ով օխտը անուան տէր Սըպկարապետ, ով Հազարանփրկիչ, ով սրբոց զոխ սուրբ Աստուածածին, դու քո ստեղծած հոգին չկորցնես, ով Արար սըպնիշան, Դարալագեազու սուրբ Խաչ, Բաղշու Կարմրակ, Փուտկու սուրբ Գէորգ, դու հասնես, ով ազատարար սրբեր, դուք հասնէք, դուք ազատէք ցաւից չոռից, շար աչքից, շար լիզուից, դադից, դադարալից, իլլաքի (մանաւանդ) անզգամի նհաղ շոռից (զրպարտութիւնից) ազատէք ամեն հայ քրիստոնէին: Ով աղա սուլթան Սըպկարապետ, քո ձեռն ա, իմ ձեռք չէ, դու պիտի էս ցաւին փարատութիւն տաս»:

Այն ևս պիտի աւելացնեն, որ այս գաւառում յաճախ «Բուզաբերի» մոմ են գործածում, այսինքն իկեղեցում վառուած մոմերի մնացորդը, որ աւելի զօրաւոր լինի:

Հետաքրքրական է նաև «հրեշտակակոխ», «սատանակոխ» բառերը, որ մոմ թափողները ասում են, երբ կամենում են յայտնել, թէ հիւանդը հրեշտակներից կամ սատանաներից է վախեցել:

<sup>1)</sup> Իմ «Զաւախք». եր. 242.

<sup>2)</sup> Իմ «Վարանդա». եր. 234.

<sup>3)</sup> Փիլոյեան. Կորած Մարգարիտ. եր. 142.

Գործի քցելը.—Կատարուում է նաև Ջաւախքում <sup>1)</sup> և Լօռում <sup>2)</sup>, ուր և մանրամասն նկարագրել եմ: Այս գաւառում քցելիս՝ զխաւորապէս դիմում են «կորուսախան սըր Մինաս»-ին:

Քիչ չափելը.—Վարանդայում այսպիսի գուշակութեան ասում են «կեզ չափել», իսկ Լօռում՝ «կուռ չափել»: Այս բոլոր տեղերումն էլ միտակեակ է կատարուում <sup>3)</sup>:

Մտղ պտտեցնել կամ նետ դնել. նոյնն է ինչ որ Ջաւախքում <sup>4)</sup> և Լօռում <sup>5)</sup>:

Լայլուղ յիշկելը.—Այսպիսի գուշակութիւն չի կատարուում «Երոյշեալ գաւառներում: Գուշակել տուողը «խոտերտում» է լայլուղի վրայ, այսինքն թաշկինակը ծալծլում է՝ մտքում կրկնելով այն, ինչի մասին որ կամենում է խորհուրդ հարցնել. և տալիս յիշկողին: Սա բայ է անում թաշկինակը և գուշակում, թէ՛ նրա «խոտերը» (մտադրութիւնը) կատարուելու է թէ՛ ոչ, բարբ է: թէ՛ չար:

Իտցի-դուլ.—Գուշակողների թւում պէտք է հաշուել նաև խաչի-դուլներին, որոնք այս գաւառում ևս բաւականաչափ եղել են և որը մանրամասն նկարագրել եմ արդէն իմ «Գանձակի գաւառ» աշխատութեանս մէջ <sup>6)</sup>: Այս գաւառում նշանաւոր է եղել ս. Յովանէսի գուլը:

Ծնունդի քաւակի և ծագի սեռը գուշակողներ.—Տուածուրիկ շնորհք է համարուում և այն, որ որոշ մարդիկ կարողանում են ծնունդիք գաւակի կամ ձագի սեռը գուշակել: Այսպիսիներից նշանաւոր են Գիւղալդարեցի Վարդանը: Սա մի անգամ գնացել է Ս. Գէորգի սարը և այդտեղ, մի կիսաւեր վանքի մօտ քնել. երազում երևում է նրան սուրբը և ասում, թէ շնորհք է տալիս նրան գուշակելու, թէ՛ ծնունդիք գաւակը կամ ձագը ինչ սեռի է: Սրա համար, պատուիրում է սուրբը, տար յղիին ջրի, գետի մօտ, կամ ջուրը բեր յղիի մօտ և իսկոյն կրտսենես՝ որ նրանից ծնուողը մերկ կը հետևի նրան:

Վարդանը նստում էր գետի ափը և երբ կողերը գալիս էին ջուր խմելու, նա տեսնում էր նրանցից ծնունդիք հորթերին ա-

1) Իմ Ջաւախքը.

2) Իմ Բորչալուի գաւառ. Ազգ. Հանդ. գ. X.

3) Տես իմ «Վարանդա» և «Բորչալուի գաւառ» Ազգ. Հանդ. գ. X:

4) Ջաւախք.

5) Բորչալուի գաւառ.

6) Իմ Գանձակի գաւառ. հ. Բ.

ներևութարար նրանց հետեւելիս և զուշակում էր սեռը: Շատ ուշատ անգամ յդի կանանց էլ ջրի մօտ էր տանում և տեսնում էր, որ ծնունդէք երեխան մերկ հետևում էր մօրը, ուստի և զուշակում էր թէ ինչ սեռի է լինելու:

Բանալի դնել.—Մի ընդհանուր ձև ևս կայ զուշակութիւններ անելու, որի համար անհրաժեշտ չէ ոչ որոշ օր ծնուիլ, ոչ էլ որևէ սրբի շնորհին արժանանալ: Այս բանալի դնելն է: Ով կամենում է զուշակել հիւանդի վիճակը, կորուսած իրի տեղը, իւր մտադրութեան յաջող կամ անաջող ելքի մասին՝ մի բանալի է դնում օտի տակ և կանգնում շորս փողոցների կարուստ տեղում և անխօս լսում անց ու դարձ անողների խօսակցութիւնները և դրանցից մի եզրակացութիւն հանում:

Թ. Աղօթողներ.—Աղօթքների միջոցով թէ տղամարդիկ և թէ մանաւանդ պառաւ կանայք որոշ հիւանդութիւններ են բժշկում, և այս պատճառով էլ հասարակութեան մէջ առանձին յարգանք են վայելում: Աղօթողները իրենց այդ շնորհքը սրբերից չեն ստացել, այլ մի ուրիշից սովորել են, և իրենք էլ ուրիշներին սովորեցնում են, միայն միշտ տղամարդը կնոջ, կինը տղամարդի է սովորեցնում, այլապէս աղօթքը «չի կրտրէ»—զօրութիւն չի ունենալ:

Աղօթելու կերպը և աղօթքների մեծագոյն մասը նման լինելով նրանց, որ արդէն նկարագրել եմ «Բորչալուի դաւառ» աշխատութեան մէջ, ես չեմ ուզում կրկնել այստեղ, իսկ փոքր ի շատէ տարբերուող աղօթքները զետեղում եմ Բանահիւսութեան բաժնում:

Ժ. Կախարդներ.—Գեղարքունիքում ևս կան տղամարդ կախարդներ, գրբացներ, գլխաւորապէս տիրացուներից և քահանաներից: Սրանք գործում են Սողոմոնի, Ախտարի, Վեց Վազարեան, Հաւախօս կախարդական գրքերի ցուցմունքներով: Առաւելապէս դիր են անում ամլութեան, դանազան հիւանդութիւնների դէմ, զբաւում են երիտասարդի կամ աղջկայ սէրը, «բթիկ» անելով հրապուրում են կանանց և ցանկացածը անել տալիս մարդկանց, «կապում երկինքը», որ անձրև չգայ և նորից բաց անում, զըտնում դանձրև և ամեն բան զուշակում: Իսկ սրանցից «գաւտտ» կամ «չլա» մտածները՝ հալածում են դեերին, ծովեր անցնում, մարդկանց աներևութացնում, կերպարանափոխում և հայելու մէջ նայելով իմանում աշխարհի բոլոր գաղտնիքները: Բացատրենք այս մի առ մի:

Գաւտտ կամ զա մանել.—Թիզախ կախարդը գլխից ձևուք վերցնելով, յանդգնում է դեերի, սատանաների հետ մրցման դուրս

դալ, և հաւաքելով իւր կախարդական զրքերը՝ փակուում է մի այլի մէջ և այդտեղ քառասուն օր մնալով ոչ մի ազամորդու երես չի տեսնում և կանչելով զեկերին ու սաստանաներին, նրանց հետ կըռուում է և հրամայում, որ իրեն հնազանդուեն: Դեկերն ու սաստանաները զէնք են խաղաղնուում նրա աչքի դէմ, սպառնում են այրել, կտոր կտոր անել, եռացրած ջրի մէջ ձգել և այլն: Եթէ կախարդը այս սպառնալիքներից վախենում է՝ զիււահար է լինում, զեկերի հլու հպատակը դառնում, իսկ եթէ ոչ՝ ենթարկւում է սրանց վերջին փորձաքարին: Դալիս են զեղեցիկ հուրի-փերի-ներ և բիւրուոր հեշտանքներով աշխատում հրապուրել, երևում են սաստանաներ և դանձ, փառք, մեծութիւն խոստանալով աշխատում իրենց հնազանդեցնել, և երբ այս բոլոր փորձանքներից կախարդը յաղթող է դուրս գալիս՝ նուաճում է զեկերի գլխաւորին «Դամշէլին» կամ «Թեղաս»-ին և իրեն օգնական դարձնում: Այնուհետև նա ամենայն ինչ հրամայում է այս գլխաւորին և նա անմիջապէս կատարում է:

Դու կողմի.—Դուռտ մտած կախարդի գլխաւոր գործը զեկապելն է, որ կատարում է այսպէս. զիւռտ մարդուն նստեցնում է մի կիսամութ սենեակում և հրամայում յառած մի քանի ժամ շարունակ նայել իւր առաջը դրուած թասով ջրին. ինքն էլ դանազան անհասկանալի ազօթքներ շշնջելով՝ ասում է. «Տես, իսկոյն զեկեր կրգան կանցնեն թասի միջով, դաթր քո մէջ մտած զեկն և իմ ձեռք տուր: Եթէ զիւռտը չի տեսնում, սա բարկանում է և նոյն իսկ ճիպոտով թակում, մինչև որ նա բռնելու և իրեն յանձնելու շարժումներ է անում: Այն ժամանակ սա այս զեկին խօսեցնում է և երգում առնում, (սկապում է) որ այլևս այս հիւանդին չձօտենայ:

Ծով անցնել.—Դուռտ մտած կախարդը երբ կամենում է մի որևէ ծովից անցնել, վերցնում է երկու տաշա, մինի մէջ կաթ ածում, որ ներկայացնէ սպիտակ ծովը, միւսի մէջ ջուր՝ սև ծովը: Եւ երբ շէնքերով անցնում է սրանց վրայից՝ արդէն դանում է անցնելիք ծովի այն կողմը:

Մարդկանց և իրերը անտեսանելի դարձնել.—Դուռտ մտած կախարդը եթէ կամենում է մարդկանց, կամ իր, կամ դանձ անտեսանելի դարձնել՝ տեղաւորում է նրանց երկու տաշաերի միջև, որոնց մինի մէջ կաթ, իսկ միւսի մէջ ջուր ածելով՝ ներկայացնում է սպիտակ և սև ծովերը: Երեք օր այդ զրուքիս պահելուց յետ՝ մարդն էլ, իրն էլ անտեսանելի են դառնում, և նոյն իսկ երբ հասարակ կախարդներն աշխատում են գուշակել նրանց տեղը՝ նրանց երևում է սպիտակ և սև ծովերի միջում:

Նոյնպիսի կախարդը Համբարձման հրաշագործ գիշերը, այն վայրկենին, երբ երկինք ու գետինք, սարեր ու ձորեր, աստղեր ու լուսին, քարեր ու թփեր սկսում են միմեանց ողջունել, նա «խիպիլիի քոլոզ» է խնդրում և ստանում: Այս քոլոզը (գլխարկ) թէ ինքը և թէ ուրիշները ծածկելիս աներևութանում են, ու արձակ համարձակ շրջում մարդկանց մէջ՝ առանց նրանցից նկատուելու:

Կերպարանափոխութիւն.— Կախարդները իրենց ձեռքի կախարդական գաւազանով խփում են մարդկանց և նրանց կերպարանափոխում, զանազան կենդանիների, շան, կատուի, իշի, ջորու կերպարանք տալիս: Մի առ ժամանակ նրանց այսպէս թողնելուց, և շատ անգամ աշխատեցնելուց յետ՝ նրանք նոյն գաւազանով կրկին խփում են և մարդ դարձնում: Շատ անգամ պատահել է, որ կախարդը մի գիւղից միւսն անցնելիս հաւանած հարսին գաւազանով խփել է՝ էշ դարձրել, հեծել գնացել է միւս գիւղը, գիշերը կրկին մարդ դարձրել, իւր մօտ պահել և առաւօտեան արձակել:

Թթիկ անել.— Կախարդը ինչ որ կամենում է՝ կարող է ներշնչել որ կատարեն. սրա համար հարկաւոր է, որ նա այդ ցանկութիւնը գրէ իւր բուժ մատի եղունգի վրայ: Պատահել է, որ նա գրել է՝ թէ կանայք մերկանան իւր առաջ. անմիջապէս այս խեղճերին թուացել է թէ կանգնած են մի գետի ափին և ստիպուած են շորերը հանել ու անցնել. սկսում են հանուել: Բայց հէնց որ կախարդը ջնջում է բթի հղնգի վրայի գիրը՝ կանայք սթափուում են, և նկատելով իրենց մերկ կանգնած կախարդի առաջ՝ զարհուրում են:

Հայելու մէջ նայել.— Կախարդը Համբարձման գիշերը նստում է աստղերի տակ և իւր կախարդական ճիպտոտով երեք անգամ խփելով գետնին՝ նայում ձեռքում բռնած հայելու մէջ: Աշխարհի բոլոր շարժ ու բարձր, բոլոր անյայտներն ու զագտնիքները գալիս անցնում են հայելու միջով և երևում կախարդին:

Կախարդական կծիկ, գորգ եւ սուփրա.— Նշանաւոր կախարդները կախարդական կծիկ, գորգ և սուփրա ունեն: Մրանցից առաջինը գործ են ածում այն ժամանակ, երբ կամենում են դէպի երկինք թռչել, կամ մի հեռու տեղ գնալ.— բռնում են կծիկի թելի ծայրից և կծիկը դէպի գնալու կողմը ձգում: Կծիկը հետզհետէ քանդուելով զլորւում է օդի մէջ, և նրանից կախ ընկած կախարդը աներևութաբար անցնում հազարաւոր վերստեր:

Գորգը գործ են ածում մինին, գլխաւորապէս աղջկան, փախցնելիս: Հրաւիրելով սրան նստել այս գորգի վրայ, որ իւր

տեսքով բոլորովին չի տարբերում սովորական գորգերից, կախարհը իւր ձեռքի ճիպոտով խփում է գետնին և իսկոյն գորգը վրայի մարդկանցով թռչում անցնում է հազարաւոր վերստեր և գալիս իջնում է կախարհի ցանկացած տեղը:

Երբ կախարհը բաց է անում սուփրան, և զանազան ուտելիքների անուն տալիս, անմիջապէս երևում են սուփրի վրայ:

Կախարհների ազդեցութիւնից ազատուելու համար՝ մարդիկ, մանաւանդ կանայք, կրում են պողպատէ մատանի կամ մանեակ, որ շինում են զարբինները Յուդի (Աւագ) ուրբաթ օրը՝ առանց մի խօսք արտասանելու Սահչուում է ուրբաթ արուր և ընդհանրապէս ամեն տեսակի շարոցի դէմ է:

Զախմարի Թափող կամ չախմարի զանոյ.—Երբ կայծակը խփում է մի տան կամ մի մարդու, այդ տան մեծը կամ կայծակահարը և կամ վերջինիս որդին, եթէ հայրը կայծակի հարուածից մեռնում է, ստանում են դէմքի և գլխի վրայ յառաջացած վերքերը բուժելու շնորհ և կոչւում են շախմարի թափող կամ շախմար—զանն ու Սրանք ուրբթմտին, կիրակնամտին և չորեքմտին չախմարով խփելով կայծքարին՝ կայծեր են տեղացնում այդպիսի հիւանդների գլխներին և այսպիսով բժշկում:

Ճուտ հեծնող պատու.—Միբային յարարելութիւնների մէջ բաւական մեծ գեր են խաղում ձուտ հեծնող պառաւանները: Սրանք այսպէս են կոչւում, որովհետև մի տեղ գնալիս, կամ ծովից անցնելիս հեծնում են ձուտը (կաւէ խնոցի), շահմար օձը իբր մըտրակ ձեռքն առնում և երկնքի վրայով սաւառնում, մի վայրկեանում հարիւրաւոր վերստեր անցնում:

Սրանք գլխաւորապէս գործում են տղի կամ աղջկայ սէրը գրաւելու. գնում են սրանց մօտ՝ խօսում, զոյժում մինի մօտ միւսին և խօսելիս մատների մէջ պահած եօթը գոյնի մետաքսէ թելերը հանդուստում—(խանդուրձում), ու այսպիսով տղայ ու աղջիկ իբր սև կապում:

Մարդպէլ.—Պատահում է, որ պառաւ կանայք լուսընկայ գիշերն անկողնուց վերկենալով՝ տկլոր դուրս են գալիս: Սրանց այս անպատկառութիւնը Աստծուն այնքան անդուր է լինում, որ անմիջապէս երկնքից դայլի մորթի է ընկնում սրանց վրայ: Այնուհետև սրանք գիշերները հաջնում են այս դայլի մորթին, մարդագէլ դառնում, և գնում, թափառում գիւղում և եթէ բաց դուռ են դանում, մտնում են ներս, և յափշտակում երեսաներին, ուտում: Առաւօտեան շատ վաղ, սրանք հանում են մորթիները, զգուշութեամբ շատ ծածուկ տեղում պահում, կրկին մարդու կեր-

պարանք առնում և գալիս տուն, պառկում իրենց անկողիններում:

Եթէ մինը յաջողացնի գտնել զբանց այդ գայլի մորթին և կրակը ձգելով ոչնչացնել, զբանով նրա տէր պառոււիս անվերջ տանջանքի կենթարկէ, որովհետև նա մինչև մեռնելը կը տանջուի մորթին որոնելով: Իսկ եթէ թողնեն եօթը տարի մարդագէլ ֆնայ, ինչպէս տնօրինուած է լինում, մորթին կրկին կը վերանայ երկինք և այնուհետև նա այլ ևս մարդագայլ չի դառնալ: Այնուհետև կը ֆնայ նրան ապաշխարել իւր մեղքերը:

Տեղերը.—Այս գաւառում ևս կանայք հաւատում են, որ կարող են մարմնով երկրիս վրայ ֆնայ, իսկ հոգով բարձրանալ երկինք, անցնել դժոխքի և դրախտի միջով և տեսնել իրենց շախմատը:

Նոր-Բայազէտցի Դիւտտի Ալմօ պառոււն էլ մի այսպիսի փափագ է ունեցել, որի համար և շատ անգամ դիմել է սրբերին: Մի անգամ, երբ սրա որդին՝ Ասլանը՝ սաստիկ հիւանդ է լինում, Ալմօն մի քանի անքուն գիշերներ անցկացնելուց յետ՝ զուխը զընում է որդու բարձին, որ մի քիչ հանգստանայ: Մէկ էլ յանկարծ տեսնում է Գարբիէլ հրեշտակին, որ մի երեխայի զլիսի մագերից բռնած, կանգնեց իւր առջև և ասաց. Ահա եկել եմ, որ կատարեմ խնդիրդ՝ քեզ տանեմ «էն հանդէն», որ «ախրդ» տեսնես. շուտ արա զնանք:

«Այդ երեխան ո՞վ է», հարցնում է Ալմօն:

—Սա մի կնոջ հոգի է, պատասխանում է Գարբիէլ հրեշտակապետը, որ մի քիչ առաջ առայ, տանում եմ երկինք: Արի դու էլ ինձ հետ: Եւ այս ասելով Գարբիէլ հրեշտակապետը միւս ձեռն էլ ձգեց Ալմօին և սկսեց բարձրանալ Գնում են.—գնում են զընում, մէկ էլ պատահում են մի կանգնած մարդու, որին ոտից մինչև զուխ կպել են անթիւ, անհամար զորտեր, այնպէս որ բոց տեղ չէր երևում: Ալմօն զարմացած հարցնում է, թէ սա ո՞վ է: Գարբիէլ հրեշտակապետը պատասխանում է, թէ սա իւր փողերի շանով ապրող մարդ է, այսպէս կանգնած պիտի տանջուի, մինչև Քրիստոսը զայ պատասխան:

Գնում են առաջ, տեսնում են մի ուրիշ մարդ, որի մի ականջից միւսը խրել են մի շիկացած հաստ երկաթ, որի բոցը ցայտում է նրա բերանից:

—Սա էլ չլսող, չկատարող, իր ասածի, վատահոգի մարդ է եղել, այսպէս պիտի տանջուի՝ մինչև Քրիստոս զայ դատաստան:

Մի քիչ էլ առաջ են գնում, պատահում են մի մարդու ևս, որի քթից միւր են անցկացրել և 10 փթանոց մի կշեռք կախ տուել:

—Սա էլ կշեռքի մէջ «հարամութիւն» (խարդախութիւն) անողն է, բացատրում է Գարբիէլ հրեշտակագետը:

Էլի առջ են դնում. տեսնում են մի նստած կին, առջևում արինախառն կարագով լի տաշտ Մի հրեշտակ սուրբ ձեռքն առնում է այդ կնոջը ուտել կարագից: Սա վերցնում է, դնում բերանը, բայց չի կարողանում կուլ տալ. հրեշտակի ծանր հարուածը կուլ տալ է սալիս:

—Սա ո՞վ է եղել, հարցնում է Ալմօն:

—Սա Ֆէլրազ կին է եղել, որ Ֆէլրօվ իւր կարագը շատացրել է, ուրիշինը կարելի էր մտ պիտի քաշի մինչև Քրիստոս գայ դատաստան:

Գնում են առաջ, բաւական բարձրանում, տեսնում են մի սիդաւէտ, անուշարոյր դաշտ, առուակների եզրերին խմբուած հոգիներ ու բախ զուարթ նուրբում են:

—Սրանք էլ անմեղ հոգիներն են, որ սպասում են Քրիստոսի դարտանալ:

—Իսկ զաշտի միջի այն ոսկէ սինին (սկուաղ) ի՞նչ է, լի ամեն տեսակ բարեքներով և մէջ տեղը չորս ոսկէ խնձոր, հարցնում է Ալմօն:

—Այդ սինին մուխի Մուքոյի համար է պատրաստուած, բացատրում է Գարբիէլ հրեշտակագետը. նա շատ արդար մարդ է, երբ որ մեռնի, պիտի գայ վայելելու սինու բարեքներից. այդ չորս ոսկէ խնձորներն էլ նշան են նրա չորս անգամ նրուաղէմ ուխտ դնալուն, և սրանց վրայ էլ նստելու է նրա հոգին:

Քիչ էլ անցնում են, տեսնում են մի մեծ լիճ, տղմով ու ցեխով լցուած. բաւականաչափ հոգիներ, ցեխոտուած ու ապականուած, թաւալուում են ափին, մի ահագին բազմութիւն էլ լճի մէջ տքնում են զուրս գալ, սակայն հրեշտակները սրբրով խփում են սրանց գլխին և կրկին լիճը ձգում:

—Ափին գանուողները, բացատրում է Գարբիէլ հրեշտակագետը, քիչ մեղաւորներ են, սրանք արդէն քաւել են իրանց մեղքը և լճից զուրս եկել, սպասում են Քրիստոսին, իսկ լճի մէջ զբոսնուողները շատ մեղաւորներ են և երկար պիտի տանջուին, մինչև որ իրենց մեղքերը քաւեն և զուրս գան լճից:

Այստեղից բարձրանում են Ասատուածածնի մօտ, որին և Գարբիէլ հրեշտակագետը յանձնում է իւր բերած հոգին:

Ասատուածածինը նստած է լինում ոսկէ դահի վրայ, գլխին աղամանդեայ ակներով զարդարուած թագ, որ կուրացուցիչ նառագայթներ է սփռում իւր չորս կողմը: Գահը փայլում է հազարաւոր սկների կրակներով: Հրեշտակների մի ահագին խումբ,

գահի աջ ու ձախ կողմում կանգնած են, խոնարհ և ձեռները կրծքերի վրայ խաչաձև ծալած: Այս ժամանակ երևում է հրեղէն ձիու վրայ նստած լուսեղէն մի ձիաւոր, որ արագութեամբ յառաջանում է դէպի Աստուածածնի գահը: Գալիս, կանգնում է Աստուածածնի առջև և սպասում:

Աստուածածինը հարցնում է.— Կատարեցի՞ր:

— Այո, կատարեցի, պատասխանում է ձիաւորը. քառասուն գազ հոր փորեցի, և մէջը ձգելով քարկոծեցի. հողով, մարմնով կորաւ. ոչ հոգին ելաւ առ Աստուած, ոչ մարմինն իջաւ գերեզման:

— Այս ի՞նչ բան է, հարցնում է Ալմօն:

— Այդ արդէն քո գիտենալու բանը չէ, պատասխանում է Գարբիէլ հրեշտակապետը:

Մէկ էլ լսում է. «Աղէ, աղէ, վեկաց», վեր է կենում, բաց անում աչքերը, տեսնում, որ հիւանդ որդին իրեն ձայն է տալիս, բարկանում է, թէ ինչի՞ ձայն տուեց և թոյլ չտուեց տեսնելու և՛ իւր ախրը:

#### ՄՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Երբ թոնիրը լաւ չի վառում, տանտիկիւնները ակից շորով քամի են տալիս, քորքորում են», ասելով.

Չը՛խ, չը՛խ, չը՛խ,

Մուխը բռնէք,

Աղ բարձէք.

Չը՛խ, չը՛խ, չը՛խ:

Խմոր շաղախելիս երբ ջուր են լցնում, ասում են. Յիսուս, Քրիստոս, Աստծու բարաքէն մէջն հիւի:

Երբ հացառը (ուֆաթէն, բաթաթը) առաջին անգամ խփում են թոնրին, այսինքն առաջին հացը կոչնում են թոնրի կոզին՝ որ թխուի, ասում են.

Թագա-խաց-խացի հրեշտակներ,

Դուք իմդաղ (օդնական) հլնէք, շաբը բարին դարձնէք:

Երբ հացը թոնրի մէջ տօտօում է, հացթուխը ասում է.

Խէր, խէր,

Խացին հեժնութեն,

Մահին թանգութեն,

Իմ խօրն ու մօրն

Արքայութեն:

Հաց թխելու աւարտին գրտնկողը գրտընակը համբուրում,